



29. 11. 2024 թ.

**ԿԱՐԾԻՔ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանի «Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը» Է 00. 03. «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի նեյեմբերի 26-ի նիստում քննարկվեց Արսեն Ալեքսանդրի Բոբոխյանի «Վիշապ» քարակոթողները և դրանց հնագիտական համատեքստը» աշխատանքը պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը, պ. գ. թ. Գ. Շագոյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը և Ա. Գնունին: Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, գրականության և արխիվային նյութերի ցանկերից, հավելվածների երեք հատորներից, որտեղ հաջորդաբար ներկայացվում են հուշարձանների շտեմարանը, աղյուսակները (հատոր 2), գծանկարներն ու լուսանկարները (հատոր 3), հանույթները և քարտեզները (հատոր 4):

Աշխատանքը աչքի է ընկնում ինքնատիպությամբ, քանի որ «Վիշապ» քարակոթողները, հանդիսանալով Հայկական լեռնաշխարհի ամենաուշագրավ հուշարձաններից, հայտնաբերման սկզբից՝ XIX-XX դդ. սահմանին, արժանանալով գիտական հանրության մեծ ուշադրության, լինելով նախ և առաջ հնագիտական հուշարձաններ դիտարկվում էին առավելապես արվեստի, առասպելաբանության, պաշտամունքի և ավելի սակավ՝ հնագիտության տեսանկյունից: Այսինքն՝ քարակոթողները գրեթե չքննարկվեցին իրենց հնագիտական համատեքստի և կենսամշակութային միջավայրի, հնագիտական հատկանիշների քանակական ու որակական վիճակագրության, ճշգրիտ տեղայնացման, կանոնավոր ցուցակագրման և քարտեզագրման առումներով, մինչդեռ դիսերտանտը շեշտադրումն անում է հենց հնագիտական ասպեկտի վրա:

Ներածությունում հեղինակը շարադրում է աշխատանքի հիմնական նպատակները և դասդասում իր առջև դրված խնդիրները: Մասնավորապես նշվում է նախկին և նորագույն հետազոտությունների արդյունքները՝ միավորելով վիշապ-քարակոթողների երևույթը թվագրելու և մեկնելու անհրաժեշտությունը: Այնուհետև հեղինակն անդրադառնում է ուսումնասիրության ժամանակագրական սահմաններին, իրավացիորեն նշելով, որ թեպետ վիշապների ծաղկման դարաշրջանը միջին և ուշ բրոնզի դարաշրջաններն են, դրանց ակունքները պետք է որոնել դեռևս նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջանում: Անդրադարձ է կատարվում նաև ավանդույթի մարման գործընթացին: Ինչ վերաբերում է աշխարհագրական սահմաններին՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը և մասնավորապես Արագած, Արեգունի, Գեղամա, Եղնախաղի, Ծաղկունյաց, Կենաց, Սևանի, Մյունիքի, Վարդենիսի լեռները այս աշխատանքի հիմնական թիրախն են: Հարակից օգտագործվում են նաև Հայկական լեռնաշխարհի այլ ենթաշրջաններից (Բարձր Հայք, Տայք, Վասպուրական, Տուրուբերան, Ջավախք, Թոռոք) առկա տվյալները: Այնուհետև հեղինակը ներկայացնում է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, փուլաբաժանելով հետազոտությունների փուլերը: Աշխատանքում տիպաբանվում է նաև աղբյուրագիտական հենքը՝ գատելով հնագիտական, բանագիտական և հասարակագիտական աղբյուրները: Հեղինակը ներկայացնում է աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Էական է, որ աշխատանքը կրում է միջմասնագիտական բնույթ: Տասնամյակների ընթացքում ատենախոսը հավաքագրել է հսկայածավալ և տարաբնույթ նյութ, ներկայացնելով քարակոթողների երկրաբանական, աշխարհագրական, արվեստաբանական համատեքստը:

Հեղինակը շարադրում է աշխատանքի համառոտ բովանդակությունն ըստ զույգների:

Առաջին գլուխը նվիրված է աշխատանքում գործածվող հիմնական հասկացությունների պարզաբանմանը: Նախ, պարզաբանվում է հենց «վիշապ» հասկացությունը: Այս առումով խիստ արդիական է մենհիր-«վիշապ» հարաբերակցության խնդիրը: Ելնելով առկա տվյալներից՝ հեղինակը առաջարկում է մենաքարերի դասակարգման մի տարբերակ, որը հենվում է մշակվածություն - ձև/կտրվածք - նյութ - պատկեր/արձանագրություն - լանդշաֆտ հատկանիշների վրա: Այս դասակարգման մեջ քարակոթողներն ունեն իրենց ուրույն տեղը. մասնավորապես, դրանք բոլոր կողմերում մշակված և կենդանակերպ պատկերագրությամբ օժտված, հիմնականում դեպի վար նեղացող մոնոլիթ, կլոր քանդակներ են, որոնք ունեն մոտ 110-550 սմ բարձրություն, պատրաստված են կարծր հրաբխային քարից՝ գլխավորապես անդեզիտաբազալտներից: Հեղինակը նշում է, որ թեպետ, որոշ հատկանիշներից ելնելով, վիշապները «վիշապ» կարելի է դասել մեգալիթների թվին, սակայն իրենց մշակմամբ, պատկերագրությամբ, խորհրդաբանությամբ և հասարակական նշանակությամբ՝ որպես քանակով սահմանափակ, տարածքով սահմանված և ինքնություն ստեղծող ուղենիշներ՝ դրանք ակնհայտ քարակոթող-արձաններ են: Հեղինակն առաջարկում է «վիշապների» դասդասման խիստ տրամաբանական մի եղանակ. ցլակերպ, ձկնակերպ և ցլաձկնակերպ: Հեղինակն անդրադառնում է նաև անվանումներին բժախնդրորեն քննելով մատենագրական, բանահյուսական տվյալները, վերականգնված անվանումները, այս ամենին հավելելով սեփական դաշտային ազգագրական դիտարկումները: Այնուհետև հեղինակը ներկայացնում է վիշապային համատեքստի սահմանումները, ինչպես նաև աշխատանքի մեթոդաբանությունը:

Երկրորդ գլխում ներկայացվում և «վիշապների» ուսումնասիրության պատմությունը: Հեղինակը ճշտգրտորեն փուլաբաժանում է ուսումնասիրության պատմությունը՝ առանձնացնելով հինգ փուլ. 1. 1600-1908 թթ. հիշատակությունները, 2. 1909-1912 թթ. հետազոտությունները, 3. 1913-1920 թթ. հետազոտությունները, 4. 1921-1939 թթ. հետազոտությունները, 5. 1940-2010 թթ. հետազոտությունները: Փաստորեն առաջին անգամ ներկայացվում է հնագիտական օբյեկտի ուսումնասիրության պատմագրությունը: Հատկանշական է, որ հեղինակը որպես առանձին փուլ է դիտարկում 1913-1920 թթ., որը տակավին անհայտ է ընթերցողին:

Երրորդ գլուխում ներկայացված են նորագույն հետազոտությունները: Այստեղ գետնեղված նյութը օրիգինալ է, քանզի ամփոփում է հեղինակի մոտ երկու տասնամյակի

հետազոտությունները Հայաստանի տարբեր շրջաններում, մասնավորապես Տիրինկատար հնավայրում: Տիրինկատարն ընտրվել է որպես հետազոտության հիմնական թիրախ՝ ելնելով դրա կենտրոնական տեղադիրքից, քարակոթողների մինչ օրս հայտնի ամենամեծ կուտակում ներկայացնելու և Արագածի վրա ամենաբարձր կետը լինելու հանգամանքից: Տիրինկատարում իրականացվող պեղումներն ունեցել են հիմնական նպատակ՝ թվագրել քարակոթողները և պարզել դրանց հնագիտական համատեքստը: Բացի պեղումներից այստեղ իրականացվել են տարածքի հնամշակութային լանդշաֆտի հետազոտման, քարտեզագրման աշխատանքներ, ինչպես նաև՝ բազմապիսի բնագիտական հետազոտություններ: Քարակոթողների ուսումնասիրությանն ուղղված հետախուզական աշխատանքներն ունեն հինգ հիմնական նպատակ. 1. ստուգել գրականության մեջ, արխիվային նյութերում և հուշարձանների պետական ցանկերում առկա տվյալները քարակոթողների վերաբերյալ՝ սահմանելով դրանց հավաստիությունը: Այս նպատակով վերլուծության են ենթարկվել գիտական գրականության մեջ առկա հնարավորինս բոլոր տվյալները, հետազոտվել են քարակոթողներով զբաղվող բոլոր հեղինակների (Ն. Մառ, Յ. Սմիռնով, Ատրպետ, Ա. Քալանթար, Ստ., Ս. և Լ. Լիսիցյաններ, Լ. Բարսեղյան, Է. Խանգառյան, և այլք) անձնական արխիվները, ստուգվել են Հայաստանի Հանրապետության հուշարձանների պետական ցանկերի համապատասխան տեղեկությունները: Այս ամենի արդյունքում ճշտվել են քարակոթողների հետ կապված անվանումներ, տեղանուններ և մանրատեղանուններ, տեղադրություններ, քարակոթողների անհատական պատմությունների հետ առնչվող մանրամասներ, 2. ճշտել տեղափոխված քարակոթողների գտնվելու նախնական վայրերը: Մասնավորապես, վերջին կես դարվա ընթացքում 19 քարակոթողներ են տեղափոխվել բարձրադիր արոտավայրերից Երևան և հանրապետության այլ ենթաշրջաններ, 3. փորձել վերականգնել տվյալներ քարակոթողների պատրաստման գործընթացի մասին, 4. հետախուզական աշխատանքի միջոցով փորձել հայտնաբերել նոր քարակոթողներ, 5. նկարագրել և տիպաբանել բոլոր առկա քարակոթողներն ըստ իրենց ձևաբանական ու տարածական առանձնահատկությունների՝ հիմքեր ստեղծելով երևույթն արդի հնագիտական գործիքակազմով վերլուծելու համար: Ելնելով վերոգրյալից հեղինակն առաջարկում է վիշապ-քարակոթողների սկզբունքորեն նոր տիպաբանություն ըստ պատկերի, քանդակի եղանակի, մշակման ոճի, ձևի, պրոֆիլի և չափերի: Առանձին դիտարկվում են առանց պատկերի կոթողները: Այնուհետև հեղինակը դիտարկում է Տիրինկատարի հնավայրի բնական և մարդածին (հնագիտական) միջավայրը:

Այս համատեքստում հեղինակը դիտարկում է նաև ազգագրական ենթաշերտը, հաջողված փորձ կատարելով հնագիտական նյութի հիման վրա վերակազմել հոգևոր գործառույթները:

Երրորդ գլխի չորրորդ և հինգերորդ ենթագլուխները նվիրված են Տիրինկատարի պեղումների նկարագրությանը և դրանց հիմնական արդյունքների ներկայացմանը:

Չորրորդ գլուխը նվիրված է «Վիշապների» տաքածական կազմակերպմանը և տեղադրությանը: Այս խնդրի քննության համար հեղինակն իրավացիորեն նշում է, որ քարակոթողների երևույթը հասկանալու համար հատկապես կարևոր է դրանց բարձրությունների դասակարգման խնդիրը: Ըստ առկա տվյալների հեղինակը «Վիշապ» - քարակոթողները դիտարկում է երեք տեսակի բարձրություններում, որոնք ըստ բնակավայրային համակարգի առկայության աստիճանի, սահմանվում են որպես՝ 1. նախալեռնային գոտի (մոտ 1000-2200 մ)<sup>1</sup> մշտական բնակավայրերի միջավայրում, 2. նախալեռներից բարձրլեռնային անցման միջանկյալ գոտի (մոտ 2200-2400 մ)<sup>2</sup> քիչ քանակի մշտական բնակավայրերի առկայության հնարավորությամբ և 3. բարձրլեռնային գոտի (մոտ 2400-3000 մ)<sup>3</sup> մշտական բնակավայրերից անդին:

Հինգերորդ գլխում ներկայացված է «Վիշապ»-քարակոթողների հնագիտական համատեքստը:

Հեղինակի հետազոտությունները փաստում են, որ քարակոթողներին կից կամ անմիջական հարևանությամբ առկա են դամբարաններ, կրոմլեխներ, արհեստական քարակույտեր, հսկայի տներ/աշտարակաձև շինություններ, բազմաբջիջ կառույցներ, ոռոգման ջրանցքներ, ամրոցներ, պատեր, մենհիրներ, ժայռապատկերներ: «Վիշապ»-քարակոթողների միջավայրերում փաստագրվել են նաև ճանապարհներ, որոնց մի մասը հստակ ընթանում է դեպի քարակոթողների հարթակները՝ ունենալով մինչև երկու հարյուր մետր երկարություն. կան նաև ճանապարհներ, որոնք ընթանում են դեպի քարակոթողի մոտակայքում գտնվող կրոմլեխներ: Եթե քարակոթողները գտնվում են սարահարթում, ապա ոչ մեծ քանակի դամբարանները և աշտարակաձև կառույցները օրինաչափորեն լինում են գոգավորությունը եզերող բլուրների բարձրակետերի վրա, մինչդեռ ժայռապատկերների կուտակումները՝ բլրի լանջերին: Պեղումների ընթացքում քարակոթողների անմիջական միջավայրում հայտնաբերվել են նաև արտեֆակտներ (խեցեղեն, վանակատ, ուլունք, սուգաքար, սանդ) և էկոֆակտներ (հացահատիկ, ոսկոր, մազ), որոնք վկայում են քարակոթողների շուրջ իրականացված ծիսական գործողությունների մասին:

Աշխատանքի արժեքավոր հաստատումներից է հավելվածների բաժինը, որտեղ ներկայացվում են բարձրորակ լուսանկարները, համեմատական աղյուսակները, անալիզների տվյալները:

Աշխատանքի հավելվածներն ինքնին ինքնուրույն ստեղծագործություններ են: Մասնավորապես, հուշարձանների շտեմարանը առ այսօր գոյություն ունեցող «վիշապ»-քարակոթողների ամենամրդջական կատալոգն է: Գծանկարները կարելի է համարել արվեստի գործ: Քարտեզները բարձր որակի են և լիովին պարզաբանում են աշխատանքի բովանդակությունը:

Այսքանով հանդերձ ցանկալի կլիներ, որպեսզի աշխատանքի հետագա հրատարակման ընթացքում հեղինակը հաշվի առներ հետևյալ հանգամանքները. ա. առավել ամրդջական ներկայացվեր միջին և ուշ բրոնզի պատմա-հնագիտական միջավայրը, բ. խոսելով «վիշապների» ավանդույթի մարման մասին առավել մանրամասն դիտարկվեին դրա պատճառները, փուլերը և տեղական առանձնահատկությունները:

Ներկայացված աշխատությունը նորարար է ինչպես քննարկվող թեմայի առումով, այնպես էլ քննության մեթոդաբանությամբ և խնդրի ներկայացման ամրդջականությամբ և համապարփակությամբ: Ատենախոսությունը ներակայացնում է կոթողային քանդակը հնագիտական համատեքստում որպես հնագիտական հուշարձան: Նկարագրությունները վերին աստիճանի ճշգրիտ են, իսկ ստացված արդյունքները արժանահավատ: Փաստորեն հեղինակը կյանք է տալիս մի նոր ուղղությանը հնագիտության մեջ:

Ելնելով վերոգրյալից Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն միջնորդում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի հնագիտություն և ազգագրություն 007 մասնագիտական խորհրդին շնորհել ատենախոսության հեղինակին հայցվող գիտական կոչումը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ,

պ.գ.դ., պրոֆ.՝

Պ.գ. դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանի անդամությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, Բ.Գ.Թ.

Հ. Գ. Ավետիսյան

Մ. Վ. Հովհաննիսյան

29. 11. 2024 թ.

